

ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 23-ին, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը հոգևոր ուրախության մեջ էր: Այդ օրը Լուսավորչատեսիլ Միածնաէջ տաճարում, ձեռամբ Մայր Աթոռիս դիվանապետ և հոգևոր ճեմարանի վերատեսուչ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, տեղի ունեցավ Մայր Աթոռի երկու միաբաններ Հոգեշնորհ Տ. Առաքել աբեղ. Քարամյանի և Տ. Թադեոս աբեղ. Զիրեկյանցի մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչությունը: Հոգեշնորհ Հայր Սուրբերը նախապես իրենց վարդապետական թեզերն էին ներկայացրել Վեհափառ Հայրապետին և հոգևոր ճեմարանի հարկից ներս հաջողությամբ պաշտպանել դրանք: «Ճշմարտութեան վարդապետ, գերահանճար հռետոր և սուրբ հաւատոյ, անյաղթ ախոյեան»՝ Գրիգոր Տաթևացին շատ գեղեցկորեն է բնութագրել ՎԱՐԴԱՊԵՏԻ կոչումն ու առաքելությունը. «Վարդապետն իշխան է բանից, որ հրամայէ և ուսուցանէ, Եկեղեցոյ տեսական իմաստասէր, որ մըտօք և բանիւ տեսանէ և քննէ և ուսուցանէ և խրատէ զաշակերտս, իսկ նոքա զժողովուրդս»: Այս խորը գիտակցությամբ էլ Մայր Աթոռի երիտասարդ միաբանները Իջման Ս. Սեղանի առջև ծնրադիր, մեր հայրերի սրբազան աղոթքներով և շարականներով պարուրված, Սրբազան Հոր ձեռքից ստացան վարդապետական գավազան կրելու իրավունքը, որով պարտավորվեցին պահպանել և պաշտպանել իրենց վստահված հոտը զանազան փոթորիկներից:

Արարողության ավարտին Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը շնորհավորելով նորընծա վարդապետներին, իր բովանդակալից խրատականում շեշտում է Հայ Եկեղեցու կյանքում վարդապետի ճվիրական կոչման կարևորությունը հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր դաստիարակության գործում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Մայր Աթոռի երիտասարդ միաբաններին՝ մասնավոր վարդապետական իշխանություն ստանալու առիթով, և ցանկանում, որ ճվիրումով և անշահախնդրությամբ ծառայեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: